Արձանագրություն N 1-11/22

Շուշիի տեխնոլոգիական համալսարանի գիտական խորհրդի 2022 թ.-ի
նոյեմբերի 17-ի նիստի

Ներկա էին՝ Ն.Ա.Միքայելյան (ճ.թ., դոցենտ), Վ.Ա. Ալեքսանյան (գ.գ. դոկտոր-դոցենտ), Ա.Ա.Առաքելյան (գ.գ.թ., դոցենտ), Շ.Ա. Առաքելյան, Ռ.Յու. Ավագյան (տ.գ.թ., ավագ դասախոս), Ռ.Ս. Բաբայան (տ.գ.թ., դոցենտ), Լ.Մ. Գաբրիելյան, Ս.Բ. Գալստյան (գ.գ.թ., դոցենտ), Պ.Յու.Գասպարյան (տ.գ.թ., դոցենտ), Թ.Գ. Գրիգորյան (գ.գ.թ., դոցենտ), Ա.Ա.Մարության, Լ.Գ.Այդինյան (ուսանող),, Ն.Ժ Թաիրյան (ուսանող), Գ.Մ. Խաչատրյան (ֆ/մ/գ.թ., դոցենտ), Ս.Ա.Խուրշուդյան, Ա.Կ.Հարությունյան, Մ.Ա.Հարությունյան (պ.գ.թ., դոցենտ), Ռ.Մ. Հարությունյան, Վ.Ս. Մուսայելյան, Ա.Վ. Շահբազյան, Ս.Ա. Շահնազարյան (գ.գ.թ., դոցենտ), Է.Ս. Շամխալովա, Ռ.Գ. Սայիյան, Օ.Գ. Սահակյան, Տ.Գ.Օսիպյան, Բ.Ա.Պատվականյան (ուսանող),, Ա.Ա.Անդրյան (ուսանող),, Ջ.Մ.Կարապետյան (ուսանող):

ՕՐԱԿԱՐԳ

1. Շուշիի տեխնոլոգիական համալսարանում գիտական հետազոտությունների խթանման քաղաքականության մասին:
2. Շուշիի տեխնոլոգիական համալսարանի կարճաժամկետ (1 տարի), միջնաժամկետ (3 տարի) և երկարաժամկետ (2022-2026թթ.) ծրագրերն ու աշխատանքների պլանավորումն՝ ըստ հետազոտական գործունեության գերակա ոլորտների մասին:
3. Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ֆակուլտետների 2021-2022 ուստարվա տարեկան հաշվետվությունների մասին:
4. Շուշիի տեխնոլոգիական համալարանում ֆակուլտետների, դեպարտամենտերի /ամբիոնների/ հաշվետվությունների ներկայացման ձևերը հաստատելու մասին:
5. Շուշիի տեխնոլոգիական համալսարանի գիտական գրադարանի կանոնակարգի մասին:
6. Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ուսումնամեթոդական բաժնի կանոնակարգի մասին:
7. Շուշիի տեխնոլոգիական համալսարանի մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների և ղեկավարների հաստատման մասին:
8. Շուշիի տեխնոլոգիական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից գիտամեթոդական աշխատանքները հրատարակության ներկայացնելու մասին:
9. Շուշիի տեխնոլոգիական համալսարանի աշխատակիցների պարտականությունների մասին:
10. Դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին:
11. «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի 2022-2026 թթ. կարճաժամկետ (2022-2023 թթ.), միջնաժամկետ (2022-2024 թթ.) և երկարաժամկետ (2022-2026թթ.) ռազմավարական ծրագրի իրականացման պլան – ժամանակացույցերի հաստատման մասին:
12. Այլ հարցեր:

Լսեցին 1 – Շուշիի տեխնոլոգիական համալսարանում գիտական հետազոտությունների խթանման քաղաքականությունը գիտխորհրդի քննարկմանը ներկայացրեց Ա.Առաքելյանը:

Որոշեցին 1 – Հաստատել Շուշիի տեխնոլոգիական համալսարանում գիտական հետազոտությունների խթանման քաղաքականությունը:

Լսեցին 2 – Շուշիի տեխնոլոգիական համալսարանի կարճաժամկետ (1 տարի), միջնաժամկետ (3 տարի) և երկարաժամկետ (2022-2026թթ.) ծրագրերն ու աշխատանքների պլանավորումն՝ ըստ հետազոտական գործունեության գերակա ոլորտների մասին (զեկուցող՝ Ա.Առաքելյան):

Որոշեցին 2 – Հաստատել Շուշիի տեխնոլոգիական համալսարանի կարճաժամկետ (1 տարի), միջնաժամկետ (3 տարի) և երկարաժամկետ (2022-2026թթ.) ծրագրերն ու աշխատանքների պլանավորումն՝ ըստ հետազոտական գործունեության գերակա ոլորտները:

Լսեցին 3 - Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ֆակուլտետների 2021-2022 ուստարվա տարեկան հաշվետվությունների մասին (զեկուցողներ՝ ֆակուլտետների դեկաններ):

Որոշեցին 3 – Ընդունել ի գիտություն Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ֆակուլտետների 2021-2022 ուստարվա տարեկան հաշվետվությունների մասին դեկանների տեղեկատվությունը (հաշվետվությունները կցվում են):

Լսեցին 4 – Շուշիի տեխնոլոգիական համալարանում դեպարտամենտների /ամբիոնների/ և ֆակուլտետների տարեկան հաշվետվությունների ներկայացման ձևերը հաստատելու մասին:

Որոշեցին 4.1 – Հաստատել Շուշիի տեխնոլոգիական համալարանում դեպարտամենտների /ամբիոնների/ և ֆակուլտետների գործունեության տարեկան հաշվետվությունների ներկայացման ձևերը:

4.2 - Շուշիի տեխնոլոգիական համալարանում դեպարտամենտների /ամբիոնների/ և ֆակուլտետների գործունեության տարեկան հաշվետվությունները ներկայացնել յուրաքանչյուր տարի մինչև սեպտեմբերի 1-ը:

Լսեցին 5 - Շուշիի տեխնոլոգիական համալսարանի գիտական գրադարանի կանոնակարգը գիտխորհրդի քննարկմանը ներկայացրեց գրադարանի վարիչ՝ Ռ.Սայիյանը:

Արտահայտվեցին –Պ.Գասպարյան: Առաջարկվեց 1.5 կետում հստակ նշել թե ովքեր պետք է մտնեն գրադարանային խորհրդի կազմի:

Որոշեցին 5 – Խմբագրել և հաստատել Շուշիի տեխնոլոգիական համալսարանի գիտական գրադարանի կանոնակարգը:

Լսեցին 6 – Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ուսումնամեթոդական բաժնի կանոնակարգը գիտխորհրդի քննարկմանը ներկայացրեց Թ.Գրիգորյանը:

Որոշեցին 6 – Հաստատել Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ուսումնամեթոդական բաժնի կանոնակարգը:

Լսեցին 7 – Շուշիի տեխնոլոգիական համալսարանի 2022-2023 ուստարվա մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների և ղեկավարների հաստատման մասին:

Որոշեցին 7 –Հաստատել Շուշիի տեխնոլոգիական համալսարանի 2022-2023 ուստարվա մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաները և ղեկավարներին (ցանկը կցվում է):

Լսեցին 8 – Շուշիի տեխնոլոգիական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից ներկայացված գիտամեթոդական աշխատանքները հրատարակության ներկայացնելու մասին:

Որոշեցին 8 – Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ագրոնոմիայի, անասնաբուժության և գյուղմեքենայացման դեպարտամենտի դասախոսներ՝ Վ.Մ.Գալստյանի, Ա.Պ.Գասպարյանի, Ք.Ա.Գրիգորյանի «Գյուղատնտեսական տեխնիկայի շահագործում» առարկայից ավարտական աշխատանք /նախագիծ/ կատարելու համար մեթոդական ցուցումները և Ի. Հարությունյանի, Պ.Գասպարյանի, Ա.Գասպարյանի «Տրանսպորտային հոսքերի մոդելավորում» ուսումնական ձեռնարկը երաշխավորել տպագրության:

Լսեցին 9 - Շուշիի տեխնոլոգիական համալսարանի աշխատակիցների պարտականությունների մասին (զեկուցող՝ Պ.Գասպարյան):

Որոշեցին 9 – Հաստատել Շուշիի տեխնոլոգիական համալսարանի աշխատակիցների պարտականությունները:

Լսեցին 10 – Շուշիի տեխնոլոգիական համալսարանի տեխնոլոգիական ֆակուլտետի բնագիտության, կապի միջոցների և տեղեկատվական տեխնոլոգիաների դեպարտամենտի ավագ դասախոս, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու՝ Մարա Գասիկի Պետրոսյանի դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին:

Որոշեցին 10 – Գիտական խորհուրդը փակ գաղտնի քվեարկության արդյունքներով որոշեց.

- Շուշիի տեխնոլոգիական համալսարանի տեխնոլոգիական ֆակուլտետի բնագիտության, կապի միջոցների և տեղեկատվական տեխնոլոգիաների դեպարտամենտի ավագ դասախոս, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու՝ Մարա Գասիկի Պետրոսյանին շնորհել Ա.04.00 «Ֆիզիկա» մասնագիտությամբ դոցենտի գիտական կոչում:
- Դիմել ՀՀ Բարձրագույն որոկավորման կոմիտե՝ Շուշիի տեխնոլոգիական համալսարանի գիտական խորհրդի սույն որոշումը հաստատելու խնդրանքով:

Լսեցին 11 - «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի 2022-2026 թթ. կարճաժամկետ (2022-2023 թթ.), միջնաժամկետ (2022-2024 թթ.) և երկարաժամկետ (2022-2026թթ.) ռազմավարական ծրագրի իրականացման պլան – ժամանակացույցերի հաստատման մասին (զեկուցող՝ Պ.Գասպարյան):

Որոշեցին 11 – Հաստատել «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի 2022-2026 թթ. ռազմավարական ծրագրի իրականացման պլան – ժամանակացույցը, «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի միջնաժամկետ (2022-2024 թթ.) ռազմավարական ծրագրի իրականացման պլան-ժամանակացույցը և «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի կարճաժամկետ (2022-2023 թթ.) ռազմավարական ծրագրի իրականացման պլան-ժամանակացույցը:

Լսեցին 11 – Շուշիի տեխնոլոգիական համալսարանի կադրային հանձնաժողովի կազմում լրացում կատարելու մասին:

Որոշեցին 11 - Շուշիի տեխնոլոգիական համալսարանի կադրային հանձնաժողովի կազմում ընդգրկել իրավախորհդատու՝ Տաթևիկ Գագիկի Օսիպյանին:

Նախագահ՝ Ն.Ա. Միքայելյան

Քարտուղար՝ Ա.Ա. Առաքելյան